

Տնդնկատվություն

Գառնու 18.06.2009 M=3.6 երկրաշարժի և

սեյսմիկ ռեժիմի մասին

1. 2009թ. ընթացքում տարածաշրջանում դիտվում է երկրաշարժերի քանակական ֆոնի բարձրացում՝ սեյսմիկ ակտիվություն: Անցյալ տարվա առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել է 113 երկրաշարժ, իսկ այս տարվա առաջին կիսամյակում՝ 131:
2. Գառնու 18.06.2009 M=3.6 երկրաշարժը այդ ակտիվության շրջանակներում է: Այն հարում է Գառնու օջախային գոտուն, որը հայտնի է 1679թ. 10-11 բալանոց /M=7.0/ ավերիչ պատմական երկրաշարժով: Վերջին երկրաշարժն այստեղ եղել է 2008թ. ապրիլի 18-ին՝ 4 բալ ուժգնությամբ:
3. Գառնու 18.06.2009 M=3.6 երկրաշարժին նույն օջախային գոտում հետևել են բազմաթիվ աննշան և մի քանի զգացվող հետզհետումներ, որոնցից են 18.06.2009 ժամը 21-30-ին՝ 3 բալ ուժգնությամբ, 21.06.2009 ժամը 7-53-ին՝ 3-4 բալ և ժամը 21-25-ին՝ 3 բալ:
4. Մոնիթորինգային պարամետրերի անումալիաները տեղակայված են հիմնականում ՀՀ տարածքի կենտրոնական մասում: Դրանք փոքրաքանակ են, ցածր ամպլիտուդաներով և հիմնականում ավարտված:
5. Հայաստանում և հարակից տարածքներում ունենք սեյսմիկ էներգիայի դեֆիցիտ, որը կարող է լրանալ $M \leq 5.0$ մադնիտուդի /կամ մոտ 7 բալ ուժգնությամբ/ մեկ երկրաշարժի ձևով, կամ էլ մի քանի ավելի թույլ սեյսմիկ ցնցումների ձևով:
6. Ընդհանուր առմամբ, տարածաշրջանում սեյսմիկ ակտիվությունը պահպանվում է, իսկ Գառնու օջախային գոտում տեղի է ունենում սեյսմիկ էներգիայի լիցքաթափման բնականոն պրոցես:

22.06.2009թ.